ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2016թ. թիվ 194-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՆՈՐԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015թ. սեպտեմբերի 11-ի «2016 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 58-Ա որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Լոռու մարզի մի շարք համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները նշանակել 2016 թվականի հոկտեմբերի 2-ին:

2. Սահմանել սույն որոշման 1-ին կետով սահմանված համայնքների ցանկը և այդ համայնքներում նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիազորությունների ստանձնման ժամկետները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 23-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունիսի 29
ք.Վանաձոր